agricultural alliance
Գյուղատնտեսական դաշինք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Փոխըմբռնման հուշագիր
Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության
և Հայաստանի Գյուղատնտեսական դաշինքի միջև

05 սեպտեմբեր, 2017 թ.

Սույն փոխըմբռնման հուշագիրը (ՓՀ) կնքվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության (հետայսու՝ «Նախարարություն») և Հայաստանի Գյուղատնտեսական դաշինքի (հետայսու՝ «Դաշինք») միջև, որը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության և պարենային անվտանգության ոլորտում գործող կազմակերպությունների կամավոր միավորում է:

Փոխըմբռնման հուշագրի նպատակն է ապահովել համագործակցության շրջանակ և օժանդակել կողմերի միջև գործակցության ամրապնդմանը՝ նպաստելով Հայաստանում գյուղատնտեսության և պարենային անվտանգության կայուն զարգացմանը:

Ելնելով այն հանգամանքից, որ.

- Նախարարությունը՝ լինելով պետական կառույց, ստեղծվել ու գործում է Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան և կոչված է ապահովելու գյուղատնտեսությանն առնչվող քաղաքականության մշակումը և արդյունավետ իրականացումը,
- Դաշինքը, լինելով քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների կամավոր միավորում, նպատակ է հետապնդում Հայաստանում քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների համատեղ ջանքերն ուղղորդելու Հայաստանի գյուղատնտեսության և պարենային անվտանգության զարգացմանը, ինչպես նաև.

Հաշվի առնելով, որ.

- գյուղատնտեսության և պարենային անվտանգության զարգացումը Հայաստանի Հանրապետության կարևորագույն խնդիրներից է՝ երկրի պարենային

անվտանգության ապահովման և համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու տեսանկյունից,

- Նախարարությունը և Դաշինքը շահագրգիռ են գյուղատնտեսության և պարենային անվտանգության ոլորտում իրենց գործունեության ընդլայնման, գյուղատնտեսության զարգացումը խթանող միջավայրի ստեղծման, ոլորտում հանրային երկխոսության խթանման, համապարփակ հայեցակարգերի, քաղաքականության և գործառույթների մշակման, իրականացման և մշտադիտարկման համար,
- Նախարարությունը և Դաշինքը ցանկանում են համագործակցել գյուղատնտեսության զարգացմանն ուղղված իրենց ջանքերի արդյունավետության բարձրացման նպատակով,

Նախարարությունը և Դաշինքը հաստատում են սույն Փոխըմբռնման հուշագիրը, հետևյալ հարցերի շուրջ համագործակցություն ծավալելու համար.

1. Կողմերը համաձայն են պարբերաբար միմյանց տեղեկացնել և խորհրդակցել գործունեության ընթացքում ի հայտ եկած գյուղատնտեսության ոլորտին առնչվող խնդիրների մասին և համագործակցել դրանց վերաբերյալ լուծումներ գտնելու ուղղությամբ:
2. Կողմերը համաձայն են համատեղել ջանքերը գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվողների, հատկապես փոքր ֆերմերների շահերից բխող պարենային անվտանգության և գյուղատնտեսության ազգային քաղաքականության, այդ թվում ռազմավարությունների մշակման, իրականացման և մշտադիտարկման համար:
3. Կողմերը պատրաստակամ են տրամադրելու իրենց փորձագիտական գիտելիքն ու հմտությունները, ապահովելու քաղաքացիական հասարակության մասնակցությունը պարենային անվտանգության և գյուղատնտեսության քաղաքականության մշակման, իրականացման և մշտադիտարկման գործընթացին:
4. Կողմերը պատրաստակամ են իրենց իրավասության շրջանակներում փոխանակելու համայնքային, մարզային կամ ազգային մակարդակով կատարած աշխատանքների ընթացքում ձեռք բերված լավագույն փորձը:
5. Կողմերը համաձայն են սահմանված պարբերականությամբ իրականացնել իրազեկման համատեղ արշավներ և այլ հանրային միջոցառումներ՝ քննարկելու համատեղ իրականացվող գործողությունների կատարման ընթացքը և ծրագրավորելու հետագա գործողությունները,
6. Կողմերը կարող են միմյանց հրավիրել՝ ուղարկելու ներկայացուցիչներ այն հանդիպումներին և համաժողովներին, որոնք կողմերը կկարևորեն:

Սույն Հուշագրով սահմանված գործառույթները չեն սահմանափակում այլ գործառույթների իրականացման հնարավորությունը, որոնք կխթանեն Կողմերի միջև առկա համագործակցությունը:

Սույն հուշագրի շրջանակում նախատեսվող գործնական միջոցառումների հետ կապված ընդհանուր և ֆինանսական պայմանները կհամաձայնեցվեն ըստ յուրաքանչյուր Կողմի գործող կարգերի և կանոնադրությունների և կհստակեցվեն արձանագրությունների միջոցով, որոնք կստորագրվեն Կողմերի միջև:

Սույն Հուշագիրը չպետք է մեկնաբանվի որպես որևէ իրավական պարտականություն ստեղծող փաստաթուղթ:

ԵՎ ՈՐՊԵՍ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ, Կողմերի ներկայացուցիչները ստորև ստորագրում են:

Նախարարության ԱՆՈՒՆԻՑ.

Իգնատի Առաքելյան

ՀՀ գյուղատնտեսության նախարար

Կ.Տ

Դաշինքի ԱՆՈՒՆԻՑ.

Հայաստանի գյուղատնտեսական
դաշինքի համանախագահողներ

Վարդան Ուռուտյան

«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության
միջազգային կենտրոն» հիմնադրամ

Կ.Տ

Ռուզաննա Ստեփանյան

ՕքսԵՋԵՆ հիմնադրամի գործադիր տնօրեն

Կ.Տ

Մերի Նիկողոսյան

«ՎԻՍՏԱԱ փորձագիտական կենտրոն»
խորհրդատվական կազմակերպություն

Կ.Տ